ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ✦ НАШИ ЮБИЛЯРЫ

Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ
(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Լրացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր, սովետական նշանավոր պատմաբան Գալուստ Անուշավանի Գալոյանի ծննդյան վաթսուն տարին:

Անդրկովկասի ու Հայաստանի պատմության նոր և նորագույն շրջանի անվանի մասնագետ Գ. Գալոյանը ծնվել է ՀՍՍՀ Արթիկի շրջանի նախկին Փոքր Պարնի, այժմ Հայրենական մեծ պատերազմում զոհված իր հոր անունը կրող Անուշավան գյուղում: Դեռևս Երևանի պետական համալսարանում ուսանելու տարիներին (1945—1950 թթ.) պարզորոշ երևան եկան Գ. Գալոյանի գիտական և հասարակական աշխատանքի հակումները: Բնատուր խառնվածքի դրսևորումներ հանդիսացող երկու այդ ուղեգծին նա հավատարիմ մնաց շուրջ չորս տասնամյակի հասնող իր գործունեության ընթացքում:

Կոմերիտական ղեկավար մի շարք աշխատանքներ կատարելուց հետո 1952 թ. նա ընդունվում է ՍՄԿԿ կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան, որն ավարտելով հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա: 1955—1963 թթ. աշխատում է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում, որպես ավագ գիտաշխատող, դիրեկտորի գիտական գծով տեղակալ: Այդ տարիներին խորանում և նշանակալի գործ է կատարում պատմականացական գիտության բնագավառում:

Գ. Գալոյանը իր գիտական գործունեության սկզբնական շրջանում ուսումնասիրության թեմա դարձրեց 1917—1921 թթ.՝ ընդամենը հինգ տարի ընդգրկող, սակայն սոցիալ-քաղաքական իրադարձություններով բարդ ու հարուստ, իր հետևանքներով հայ ժողովրդի ճակատագրի համար թախտորոշ նշանակություն ունեցող ժամանակաշրջանի պատմությունը: Արդեն երեք տասնամյակ է նա զբաղվում է բոլոր հիմնական աշխատություններում պարբերաբար անդրադառնում է Հայաստանում և Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակի ու ամրապնդման պրոբլեմին, բարձր նյութեր դնում շրջանառության մեջ, խորացնում իր հետազոտությունները և գիտական մեկնություն տալիս շատ կենսական հարցերի:

Առաջին մենագրությունների («Борьба за Советскую власть в Армении». М., 1957, «Մայիսյան հերոսական ապստամբությունը». Երևան, 1960) վրա աշխատելու ընթացքում համոզվելով, թե որքան մեծ չափեր են ընդունել բուրժուական պատմագրության կողմից Հայաստանի ու Անդրկովկասի այդ ժամանակաշրջանի պատմության խեղաթյուրումները՝ նա ձեռնամուխ եղավ բշնամական գաղափարախոսության հետադիմական էությունը բացահայտելու գործին և շուտով հրապարակեց այդ խնդրին նվիրված երկու ուսումնասիրություն («Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии». М., 1960, «Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմու-

թյան կեղծարարության դեմ», Երևան 1961): Հեղինակը առաջին գրքում ցույց է տալիս, որ հակասովետական պրոպագանդայի գլխավոր կենտրոնը ԱՄՆ է: Ապա վեր է հանում բուրժուական պատմաբանների ու քաղաքական գործիչների (Ռ. Փայպս, Ս. Ֆեյ, Ռ. Հենդել, Ջ. Քենան, Հ. Կոնի, Ռ. Լոկարտ, Քյազիմզադե և ուրիշներ) փորձերը՝ տեսականորեն հիմնավորելու իմպերիալիստական պետությունների ագրեսիան ընդդեմ երիտասարդ սովետական հանրապետության, արդարացնելու Անդրկովկասի կոմիսարիատի հակաժողովրդական քաղաքականությունը: Հեղինակը միանգամայն նիշա է վարվում, երբ վերցնում է առանձին հարցեր («Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում», «Բաքվի կոմունան», «Մայիսյան ապրստամբությունը», «Քաղաքացիական կռիվները Հայաստանում»), բանավիճում դրանց չուրջը և մերկացնում բուրժուական գաղափարախոսներին: Հայերեն գրքում ընդլայնվում է քննարկվող հարցերի ժամանակաշրջանը, բուրժուական հեղինակները քննադատվում են հատկապես Անդրֆեդերացիայի պատմությունը և երկրամասում սոցիալիզմի նվաճումները կեղծելու համար: Գնահատելի է առանձնապես այս, որ Գ. Գալոյանը հերքում է բուրժուական պատմաբանների «տեսությունները» ոչ թե ընդհանուր ձևով, հրապարակախոսական բանաձևումներով, այլ համոզիչ կերպով, պատմական անցքերն ու իրողությունները վաստալից շարադրելու եղանակով: Այսպիսով, Գալոյանը սովետահայ պատմագրության մեջ առաջինն էր, որ հիմնավորապես անդրադարձավ բուրժուական պատմագրության քննադատությանը:

1963 թ. սկսվում է Գ. Գալոյանի գիտական և հասարակական առավել ծավալուն ու բեղմնավոր գործունեության ժամանակաշրջանը: Այդ թվականին պաշտպանում է դիսերտացիա, դառնում Սովետական Միության ամենահիտասարդ պատմաբան դոկտորներից մեկը և նշանակվում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր: 1971 թ. նա ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982-ին՝ իսկական անդամ: Ինչպես պատմության ինստիտուտի տնօրենի, այնպես էլ ԳԱ նախագահությունում ակադեմիկոս քարտուղարի (1979—1986 թթ.) և փոխպրեզիդենտի պաշտոններում (1986-ից) դրսևորվեցին Գ. Գալոյանի գիտակազմակերպչական ակնհայտ ունակությունները:

Տասնվեց տարի շարունակ գլխավորելով հանրապետության պատմագիտական մտքի կենտրոնի աշխատանքները, նա իր գործունեության հիմնական առանցքը դարձրեց հայ ժողովրդի պատմության ութհատորյակի ստեղծումը: Թեև մեր ժողովրդի պատմության ուսումնասիրությունը մեկ ու կես հազարամյա անցյալ ունի, սակայն այդպիսի ընդգրկմամբ ու խորությամբ, գիտական-ակադեմիական ծանրակշիռ աշխատություն առաջին անգամ էր գրվում: Բազմահատորյակում ստեղծագործաբար հանրագումարի են բերվել հայ պատմագրության նվաճումները, դրվել ու լուսաբանվել բազմաթիվ նոր հարցեր: Միանգամայն օրինաչափ էր, որ կոլեկտիվ այդ աշխատությունը, որի ստեղծմանը մասնակցել են հանրապետության ու նրա սահմաններից դուրս գտնվող անվանի մասնագետները, արժանացավ Հայկական ՍՍՀ պետական մրցանակի: Հայ ժողովրդի բազմահատորյակի ստեղծման բարդ ու դժվարին աշխատանքները գլխավորել է Գ. Գալոյանը:

Իրեն գրաղեցնող հարցերի պատմական ակունքները բացահայտելու նպատակով Գ. Գալոյանը աստիճանաբար ընդլայնում է իր հետաքրքրությունների ժամանակագրական շրջանակները, սակայն մշտապես մնում հայ և Անդրկովկասի մյուս ժողովուրդների քաղաքական պատմության հետազոտության ոլորտում: Նրա հաջորդ ուսումնասիրությունը («Рабочее движение и национальный вопрос в Закавказье (1900—1922)». Ереван, 1969) նվիրված է XX դարի երկու տասնամյակներում ցարական ինքնակալության և բուրժուազիայի դեմ մղված պայքարին: Անդրկովկասում բանվորական շարժումը և ազգային հարցի լուծումը հեղինակը քննարկում է Ռուսաստանում հասունացող հեղափոխական պրոցեսի ընդհանուր հետնախորքի վրա: Աշխատության մեջ ընդգծվում է այն միտքը, որ XX դարի սկզբներից Անդրկովկասում ինքնակալության և բուրժուազիայի դեմ երկրամասի աշխատավորների համատեղ պայքարը դառնում է հասարակական առաջադիմության հիմնական գործոնը:

Հայ ժողովրդի XIX դարի վերջերի և XX դարի սկզբի պատմության ուսումնասիրության մեջ գրեթե ավանդույթի ուժ ձեռք բերած երկու հիմնական միտում է դրսևորվել: Այդ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական պատմությունը շարադրելիս հետազոտողների տեսադաշտում են եղել մի կողմից միայն ազգային-ազատագրության խնդիրները, մյուս կողմից նրանք շեշտել են սոսկ սոցիալական երանգավորում ունեցող հարցերը՝ անջատելով ու մեկուսի ուսումնասիրելով դրանք, իսկ երբեմն էլ անհարկի հակադրելով իրար: Գ. Գալոյանը սույն մենագրության մեջ ըստ ամենայնի բացահայտել և հիմնավորել է սոցիալական ու ազգային պայքարի

միասնության տեսությունը: Նա ցույց է տալիս, որ պրոլետարիատը աստիճանաբար անցնում է Անդրկովկասի ժողովուրդների ինչպես սոցիալական, այնպես էլ ազգային պայքարի գլուխ և որ ազգային-ազատագրական հարցերի լուծման վճռական պայմանը դառնում է բանվորական շարժման հաղթանակը: Աշխատության մեջ վեր է հանվել ցարիզմի հայանալած քաղաքականությունը, քննարկվել է 1903 թ. հունիսի 12-ի օրենքը և այլ կարևոր անցքեր: Հեղինակը քննական մոտեցում է ունեցել և նորովի դիտել ուսումնասիրվող ժամանակաշրջանի բազում իրադարձություններ և իր նոր խոսքն ասել մի շարք խնդիրների մասին: Գիրքը գրված է գերազանցապես արխիվային նյութերի հիման վրա, որոնց մի զգալի մասը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Գիտական-զաղափարական բարձր մակարդակով գրված այդ ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության՝ XX դարի առաջին տասնամյակներին նվիրված լավագույն ու մնայուն գործերից է:

Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների փոխհարաբերությունները լուսաբանող հաջորդ աշխատությունը հրատարակվել է Մոսկվայում և Երևանում, ռուսերեն և հայերեն («Россия и народы Закавказья». М., 1976, «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները». Երևան, 1978): Նրանում հեղինակը ներկայացնում է Անդրկովկասի բախտակից ժողովուրդների ազատագրական պայքարը, նրանց ռուսական կողմնորոշման ձևավորման, երկրամասը Ռուսաստանին միացնելու, անդրկովկասյան և ռուս ժողովուրդների համագործակցության, նրանց դեմոկրատական ավանդույթների զարգացման հարցերը և այլ խնդիրներ: Այդ գիրքը ռուս-անդրկովկասյան առնչությունները արտացոլող պատմաքննական լուրջ ուսումնասիրություն է: Դրա տրամաբանական շարունակությունն ու ավարտն է հանդիսանում Հոկտեմբերյան հեղափոխության և Անդրկովկասի ժողովուրդների վերածնությանը նվիրված աշխատությունը («Октябрьская революция и возрождение народов Закавказье». М., 1977):

Եթե նախորդ ուսումնասիրություններում Անդրկովկասի ժողովուրդների և Ռուսաստանի հասարակական-քաղաքական ու մշակութային հարաբերությունները քննարկվում էին միջին դարերից սկսած, ապա վերջերս հրատարակված գիրքը («Պատմության քառուղիներում». Երևան, 1982) ժամանակագրական առումով ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջ պատմությունը՝ նրա ծագումից մինչև մեր օրերը: Սակայն հեղինակը նպատակ չի դնում տալու հայ ժողովրդի քաղաքական ամբողջ պատմությունը, այլ առանձին դրվագների, գերազանցապես ազատագրական մաքառումների ու պայքարի էական իրողությունները ներկայացնելու միջոցով, կուտ տրամաբանությամբ, ուրվագծում է մեր ժողովրդի անցած պատմական ուղին: Ուսումնասիրության մեջ ուրվագծվում է հին և միջին դարերում իր գոյատևման համար ժողովրդի մղած դարավոր պայքարը, նոր շրջանում հայ ազգային-ազատագրական շարժման դեմոկրատական բնույթը, հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրումը: Գրքի վերջին բաժնում լուսաբանվում են սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած համաշխարհային պատմական նվաճումները:

Գ. Գալոյանը իր մենագրության և հարյուրից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Որպես հեղինակ ու խմբագիր գործուն մասնակցություն է ունեցել «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», «Սովետական իշխանության հաղթանակն Անդրկովկասում», «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծեր», «Սովետական Հայաստանը 50 տարում», «Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (փաստաթղթերի ժողովածու) կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը:

Գալոյանն գիտնականին բնորոշ է հասարակական բարդ երևույթները փաստական նյութի հիման վրա մարքսիստական խոր վերլուծության ենթարկելու անուրանալի կարողությունը: Նրա բոլոր աշխատությունները գրված են զաղափարական խոր համոզվածությամբ և կոմունիստ գիտնականի կրքոտությամբ: Գալոյան հետազոտողին հատուկ է լայն ընդգրկումը: Նա իրեն զբաղեցնող պրոբլեմները քննարկում է ոչ միայն Հայաստանի ու Անդրկովկասի, այլ նաև համառուսական, անգամ համաշխարհային պատմական իրադարձությունների ընդհանուր հենքի վրա: Պատահական չէ, որ նրա աշխատությունները բարձր գնահատականի են արժանացել ոչ միայն հանրապետական, այլև միութենական գիտական և գիտական-կուսակցական («Вопросы истории», «История СССР», «Коммунист», «Լենինյան ուղիով», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Հայաստանի արխիվների») հանդեսներում:

Գ. Գալոյանի գիտական գործունեությունը լայն հանաչման է արժանացել ինչպես հանրապետության մտավորականության ու լայն հասարակայնության, այնպես էլ համամիութենական

ու միջազգային պատմագիտական շրջաններում: Նա որպես պատգամավոր մասնակցել է պատմաբանների 13-րդ, 15-րդ և 16-րդ միջազգային կոնգրեսների աշխատանքներին: Բազմիցս հանդես է եկել Փարիզում, Մարսելում, Լոնդոնում, Հռոմում, Վիեննայում, Բուխարեստում, Բուդապեշտում, Պրագայում և այլ քաղաքներում գումարված միջազգային գիտաժողովներում:

Դասախոսի ու հրապարակախոսի ձիրքով օժտված Գ. Գալոյանը մանկավարժական-դաստիարակչական ակտիվ աշխատանք է կատարում Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Գ. Գալոյանը քաղաքացի գիտնական է: Նա հմտորեն ու հաջող կերպով գիտահետազոտական աշխատանքը զուգակցում է գիտակազմակերպչական և հասարակական գործունեության հետ: Նրա հասարակական գործունեության ծավալի ու բնույթի մասին պատկերացում կազմելու համար բավական է թեկուզ հիշատակել գիտնականին հանձնարարված հիմնական աշխատանքները: Գ. Գալոյանը եղել է (1964—1967 թթ.) ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր գիտության և տեխնիկայի գծով Լենինյան մրցանակների կոմիտեի անդամ, 1974-ից հանդիսանում է գիտության և տեխնիկայի գծով հանրապետության պետական մրցանակների հանձնաժողովի անդամ և ապա նախագահի տեղակալ: Նա ՍՍՀՄ-ՉՍՍՀ պատմաբանների հանձնաժողովի, մի շարք պրոբլեմային խորհուրդների, «ՍՍՀՄ պատմության» երկրորդ մատենաշարի խմբագրական կոլեգիայի անդամ է: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծման ժամանակվանից Գ. Գալոյանը կոմիտեի նախագահության անդամ է և ակտիվորեն մասնակցում է սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման գործին: Գալոյանը բեղմնավոր աշխատանք է կատարում Արտասահմանյան երկրների հետ մշակույթի կապի կոմիտեում որպես նրա նախագահության անդամ և Սովետա-Ավստրիական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի դեկավար: Տարիներ շարունակ եղել է Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի անդամ, այժմ խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի նախագահն է: Նա Հայաստանի կոմունիստական կուսակցության XIII համագումարից սկսած (1964 թ.) անընդմեջ ընտրվում է կենտկոմի կազմում: Անհանգիստ ու եռանդուն, անմիջական ու գործունյա խառնվածքը, թերությունների նկատմամբ անհաշտ վերաբերմունքը, ահա այն հատկանիշները, որոնցով բնութագրվում է Գ. Գալոյանը թե՛ գիտակազմակերպական և թե՛ հասարակական-քաղաքական գործունեության մեջ:

Ակադեմիկոս Գ. Գալոյանը շարունակում է պրպտումները իր նախասիրած թեմայի՝ Անդրկովկասի հեղափոխական շարժումների և քաղաքական պատմության լուսաբանման ուղղությամբ: Նոր նյութեր գիտական շրջանառության մեջ դնելու նպատակով վերջերս նա երկար ժամանակ աշխատում էր Լոնդոնի «Փաբլիկ ռեկորդ Օֆիս» արխիվում: Գիտական հասարակայնությունը և ընթերցողները լայն շրջանները իրավամբ նրանից սպասում են բարձրարժեք նոր ուսումնասիրություններ: Իր ուժերի ծաղկման շրջանում գտնվող գիտնականին և հասարակական գործչին, գիտության շնորհալի կազմակերպչին ցանկանում ենք ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ